

ՄԱՐՏ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ապարդիւն զբաղմունք.
Ուսուցչական զբաղմունքի առիթով. Նամակ կար-
սից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Հանրապետական կառավարութիւնը և հայրենա-
սէրները միութիւնը. Արտաքին լուրեր.—ՀՅՈՒ-
ԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Երջանիկ կեանք.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՊԱՐԴԻՒՆ ԶԲԱՂՄՈՒՆՔ

Մինչդեռ մի կողմից Հայաստանի զանազան դա-
ւաւները սովի են ենթարկված, ժողովուրդը օ-
րից օր աւելի և աւելի է ընկնում տնտեսակա-
նապէս, մինչդեռ մի կողմից այդ երկրի ամ-
բողջ ժողովրդի մէջ զարգանում է գաղթակա-
նութեան վտանգաւոր ձգտումը, և աճելով ա-
նուի է կրօնական պրօպագանդան, մինչդեռ մի
կողմից Հայաստանի թէ՛ դարձողական և թէ՛
եկեղեցական գործերը շատ խառն գրութեան
մէջ են և, վերջապէս, մինչդեռ մի կողմից
զաւաւանքները զուրկ են առաջնորդներից, պիտանի
վարժապետներից, և ամեն բան անհորովան է
մատնված, միւս կողմից և Պոլսի ազգային ժո-
ղովրդի և ազգային պատրիարքարան՝ թիւրքա-
յերի իրաւունքների այդ օրինական ներկայացու-
ցիչները և ժողովրդի ցանկերը դարձանելու (?)
կոչված այդ մեծանուն հիմնարկութիւնները հա-
նաք են անում, և այն էլ, իրանց լեզուով խօ-
սելով, ազգային հանաք...

Հանաք չէ ապա ինչ է այն խաղը, որով ըզ-
բաղված են այժմ թէ՛ պատրիարքարանը և թէ՛
Ազգային ժողովը, և մատնութեան տալով ժո-
ղովուրդը և նրա ցանկերը, տիրոջական յանձնա-
ժողովներ են կազմում, և ամիսներով վիճում և
խօսում են այն մասին, թէ ինչ անական պէտք
է տալ այս ինչ հաստատիւր եպիսկոպոսին, այն
ինչ շողորթի էֆենդիին, թէ այս կամ այն մար-
դուն ինչպիսի տիրոջանով պիտի դիմել, արդեօք
վսեմաշուք, վսեմապատիւ, ազնւամեծար, մեծա-

ւոր, վսեմապատիւ, յարգոյ, թէ պերճաշուք պիտի
ասել, թէ մի ուրիշ բան...

Հանաք չէ ապա ինչ է, որ մի ամբողջ ժող-
ովրդի ներկայացուցիչ հիմնարկութիւնները բան-
ու գործ թողած, զբաղված են ծիծաղելի ձևա-
կանութիւններով և տիրոջանների մի անապի-
ն յորովանում ու զանազան կարգերի բա-
ժանելով, վաղն էլ միմեջ ազգային խնդիր
պէտք է չինեն, թէ ինչու այս ինչ անձին վսե-
մաշուք ասեցին և ոչ ազնւաշուք, թէ ինչու
այս ինչ ազգային գործիչին մեծապատիւ ասե-
ցին և ոչ թէ ազնւամեծար, և կամ ինչու պա-
րիարքարանի կամ էֆենդիների հակառակորդ
այս ինչ երեսփոխանին բարձրապատիւ տիրոջան
են տուել, մինչդեռ նա միայն «պարոն» տի-
րոջան է արժանի (տիրոջանական յանձնաժողովի
որոշմամբ «պարոն»-ը թշնամական-խախտական
տիրոջան է...)

Եւ այժմ և Պոլսի ազգային շրջանները ի-
րանց գլխաւոր ուշադրութիւնը այդ տիրոջանե-
րի խնդրի վրա են դարձրել, որի պակասը լը-
րացնում է մի աւելի նոր հարց, այն է, որ այժ-
ման պատրիարքը և նախկին Յարութիւն պա-
րիարքը միմյանց հետ վիճում և կռոււմ են թէ
արդեօք նախկին պատրիարքը իրաւունք ունի
զաւաւանք կրելու թէ ոչ...

Տիրոջանների և զաւաւանքի խնդիր,—հա-
մա միմեջ խնդրել, որով այժմ զբաղված է և
Պոլսի կենտրոնական վարչութիւնը, այն վարչու-
թիւնը, որը իբրեւ թէ կոչված է մտածելու հայ
ժողովրդի մասին և հոգալու նրա ցանկերը: Ուրիշ
աւելի կարեւոր պարտաւարութիւն և Պոլսի ազ-
գային վարչութիւնը չէ տեսնում և չէ զգում...

Խ. Մ.

ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԴԱՄԱՐԱՐՈՒՄ ԱՌԻԹՈՎ

Կարգաւորով «Մշակի». յարուցած հարցը՝ ու-
սուցչական և առնառարակ մտաւոր գործիչներին
համար զբաղմունքի հիմնելու վերաբերեալ, ևս ամե-
նայն սրտով ցանկանում եմ և սպասում եմ, որ
հարցը չը մնայ լոկ հարց և խօսք, այլ աշխատի
եկրկամը տաք-տաք ծնենք և որքան կարելի է

բնական, մտեցաւ մարդաբոյ հայելուն,—որի մէջ
նա տեսաւ իրան ամբողջապէս, ոտից մինչև
գլուխ, և այդ տեսքից բոլորովին բաւական և
զոհ սկսեց ոտից իր դեռաւորս բեկնել: Նա մի
նոր զիջք բռնեց և էլի նայեց հայելուն, կարծես,
կամենալով հաւատարման՝ արդեօք ամեն կողմից
էլ նա այնպէս լաւ է, ինչպէս առաջից, թէ ոչ
Նայեց Միխայիլ Նեփոյիլը իրան այդ դրութեան
մէջ մի քանի վայրկեան, ժպտաց և կրկին փո-
խեց դիմքը, ուրեղում այժմ բեկնելի միւս կէտը:
Նա, բոլորովին համոզված, որ ամեն բան այն-
պէս է, ինչպէս և միշտ և ինչպէս հարկաւոր է
որ լինի, հեռացաւ հայելուց և մտեցաւ դրասե-
ղանին: Այնտեղ կային մի քանի լրագրիչներ
ծաղրական թերթեր: Միխայիլ Նեփոյիլը վերցրեց
այդ ծաղրական թերթերից մէկը, թերթից դէս
ու դէն, կարդաց մի ծաղրական սիրահարական
խօսակցութիւն, ինքնագոհ կերպով ժպտաց և ա-
պա յորանջեց, ձեռքը իսկոյն բերանին տանելով:
Այդ արդէն նրա կեանքի մի ուրիշ պահանջի յա-
ռաջարկն էր... Ժամանակ էր բաւականութիւն
տալ և դրանք Նա մտեցաւ փափուկ դիւանին,
հանեց վրայից, ինչ որ պէտք էր հանել հանգիստ
առնելու համար և հագաւ խալաթը: Խալաթը
դեռ մի տարի առաջ նրա ցանկալի և փայփա-
յած լուէլն էր.

—Ախ, կըր ես էլ սեփական խալաթի կունե-
նամ, մտածում էր նա մի տարի առաջ:

Հօր մահից յետոյ իսկոյն հասաւ նա այդ ի-
դէպին:

Խալաթը հագնելուց յետոյ նա վերցրեց մի ա-
նուանոտ սիգար, կպրեց և, պառկելով դիւանի

շուտ գլուխ բերել. ևս հաւատացած եմ, որ միւս
բոլոր պաշտօնակիցներս (ուսուցիչները) մեծ հա-
մակարանքով կը վերաբերվեն դրան, համարելով
այդ խնդրի իրագործումը իրանց կեանքի ապա-
հովութեան գլխաւոր պայմաններից մինը: Ոչ դը-
սրտով հակառակ չէ կարող լինել իր դրութեանը
նկատարան օգնելուն, թէ ուղղակի և թէ կողմ-
նակի աղբիւրները. ուղղակի աղբիւր պիտի
հասկանանք մարդու ստացած ուժիկը, իսկ կողմ-
նակիին՝ նուէրները, ներկայացուցիչները և այլն:

Պաշտօնակիցներըս մի քանիսը, մասնաւոր
նրանք, որոնց ստացած ուժիկը, մերի հետ համե-
մատելով, շատ ողորմելի է, գուցէ դժուարանան
տարեկան մի որոշ գումար վճարելու:

Գիտէք այն առածը, որ ասում է. «Վաւեր ծա-
կից չէր մտնում, ցախաւեն էլ պոչից կապե-
ցին», մեր բանը ճիշդ այսպէս է. իբրեւ թէ «Վա-
րարատի» փողը կարողացանք վճարել, մնաց թե-
մական դարձողներ և որը ու այրիններն: Միթէ
մենք ուսուցիչներս, աւելի ապահով ենք, քան
այն որը և այրինները, որոնց օգտին այնքան փող
են պահանջում. միթէ մենք ինքներս որը և այ-
րիններ չենք. որ ապահոված մարդն է՝ երկար մը-
նում ուսուցչական ասպարիզի մէջ քանիսին կա-
րող ենք մտածանիշ անել: Միթէ մենք աւելի ա-
պահով ենք, քան թեմական դպրոցը, որը ունի
բազմաթիւ աղբիւրներ և արդէն ապահոված կա-
րելի է համարել: Վերջապէս, ենթադրենք մի քո-
պէ, թէ հէնց ապահոված չէ, միթէ թեմական
դպրոցը կարող է ապահովել ուսուցիչներին դա-
սակարգը, որին ապագայում սպասում է ամենա-
ծանր անապահովութիւնը, ինչպէս է պաշտօնա-
գուրդ լինելը, թողարկութիւնը, կուրսութիւնը և
ընտանեկան անբարեբախտութիւնները: Եւ միթէ ու-
սուցչական զբաղմունքի հիմնելու հարցը դարձեալ
արխիւ պիտի ընկնի և մեր ցանկացած չէ իրա-
գործվելու: Միթէ երևանի կոնսիստորիան պիտի
շարունակի պահանջել մեզանից այնքան գումարը:
Եւ որքան մտածում եմ, կարծում եմ, որ կոնսիս-
տորիան, որը մեծ խնամք ունի որը և այրիններ
վրա, այնքան անհեռաւոր չի լինի, որ մեզ
զրկի ապագայում մեր որը և այրինների հա-
մար հոգալու. նա մեզ էլ մի նոր դուռ բաց կա-
նի մեր անձնական ապահովութեանը ձգտելու:

Իրա, աշխատեց քիչ առ քիչ իրան հաճելի կիսա-
քնի մէջ ձգել...

Ահա նա վաղած է աչքերը, ոչինչ չէ տես-
նում, ոչինչ չէ զգում դրանից, բայց նրա ներսը,
ներսը կատարվում է մի հաճելի գործողութիւն,
—այդ նրա ներքին, հոգեկան կեանքն է: Նրա
աչքի առաջ ներկայանում է զգալի կերպով
կարծես տեսը և ձև ստացած նրա անհուն հարս-
տութիւնը.—այդ բոլորը նրան է, նրանք միայն
և ոչ ոք չը կայ նրա վրա տէր, նրան արգելող
նրանից հաշի պահանջող: Նա մտաբերում էր
այդտեղ իր հօրը, որը մի տարի առաջ կենդանի
էր և իր կենդանութեամբ թունաւորում էր Մի-
խայիլ Նեփոյիլի ամբողջ էութիւնը, արգելք լինե-
լով նրա ամեն մի քայլին, և ձգտումներին: Մի
և նոյն ժամանակ մի տեսակ փափուկ ամբողջ
էութիւնը շոյող զգացմունքով լցնում է նրա հո-
գին այն միտքը, որ այլ ևս, փառք—Աստուծոյ,
այդ արգելքը չը կայ, որ նա արդէն հողի տակ
է: Յետոյ անցնում էին Միխայիլ Նեփոյիլի գլխով
մէկը միւսի ետևից նրա երջանկութիւնը կազմող
պարագաները.—նախ և առաջ սեփական կառքը
ու սեփական սիրուհին, որին պահել նրան շատ
թանկ է նստում, բայց շատ էլ բաւականութիւն
է պատճառում, յետոյ առնաստիակ նրա կամքին
հու գեղեցիկ և պէճաւորող օրիորդները, բնասո-
րաններում և հիւրանոցներում ընկերները հետ
կանանց մասնակցութեամբ անցկացրած երեկոյթ-
ները, մասկարադները ու կուրսները և այնտեղ
տեղի ունեցած տոկոսական սիրահարական պա-
տահարները, վերջապէս իր տան սարը ու կարգը,
նիստ ու կացը իր ճաշակին համաձայն և որ ա-

կօնսիստորիան եթէ մեծ խնամք է տանում ներ-
կայ որը և այրինների համար, թող չը ձեռնարկի
մի միջոցի, որը ապագայում կը նպաստի նոյն
տեսակ պաշտօնագուրի՝ կոյր, թողարկումով վա-
րակված՝ վարժապետների և վարժուհիների բազ-
մացնելուն: Մենք բոլոր ուսուցիչներս մեր բոլոր
պաշտօնակից այրի և օրիորդ վարժուհիներով, կը
խնդրէինք կօնսիստորիայից չը պնդել իր հրամա-
նագրութեան իրագործման վրա:

Ինչ վերաբերում է ուսուցչական զբաղմունքի
հիմնելու խնդրին, կարծեմ այսպիսի բան շատ
վաղուց պիտի սկսված լինէր, որ մնաց որ այ-
ժմ անհրաժեշտ է մեր դասակարգի որը և այ-
րինների համար: Բայց, սրա համար ում դիմենք,
և ինչպէս գործենք, ես ընկած եմ մի անկիւնում,
մի այլ ուսուցիչի մի այլ տեղ. մեր մէջ էլ մի
ընդհանուր կապ չը կայ, չը կայ նոյնպէս և մեր
մէջ սէր ու միաբանութիւն: Բացի սրանից մեր
մէջ պակաս գործեր չեն կատարվում, որոնք ու-
սուցչական անուան մեծ արատ են բերում. ահա
տարին վերջանում է, դիցուք ես գիտեմ որ ուրիշի
տեղը չաղ է խմից, նա ստանում է 500 ռ., իսկ ես
400 ռ. շուտով խնդրի պիտի ուղարկեմ նրա հո-
գաբարձունքին և պահանջեմ 450 և մի և նոյն
ժամանակ հաւատացնեմ, որ շատ փորձված և
ուսումնական վարժապետ եմ. ի հարկէ, որ ան-
խելը հոգաբարձուն իմ խնդրքս չի ընդունի:
Բայց միւսն էլ ինձանից պակաս խորամանկ չէ-
նա էլ լաւ է ըմբռնել մրցման գործով: Իր
պահանջը նա էլ է ինքնուր 400 ռուբլու և դար-
ձեալ տեղում պիտի է մնում, թէ և հոգաբարձու-
ները հէնց հաստատ համոզված լինեն, որ ճիշդ
ես նրանից լաւ եմ, բայց նա դարձեալ զաւա-
նում է: Ինձանից, երբ պահանջը պակասեցնում
է... Այդպիսով մենք ընդհանրութեան համար ո-
չինչ չենք կարող անել, քանի որ զբաղված ենք
մեր անձնական գործերով, և մեր հոգաբարձու-
ներին դուր գալով: Ուրեմն ո՞վ պիտի աշխատի այդ
զբաղմունքի խնդիրը իրագործել, եթէ ոչ նրանք,
որոնք մեզանից աւելի խելօք են և մտաւոր կա-
րողութիւն ու հեղինակութիւն ունեն գործի զը-
լուի կանգնելու:

Նիէք սիրելի պաշտօնակիցներս, միասին դիմենք
բոլոր այն մարդկանց, որոնք ընդունակ են գոր-

մենազլխաւորն է, իր անսահման սանձարձակ
ինքնուրոյնութիւնը,—հաւաք բոլորը կեանքի
մէջ, գեղեցիկ գոյներով ներկված, անցնում էին
Միխայիլ Նեփոյիլի գլխով, նրա ամբողջ հոգուն
անխալարապրելի հաճոյք պատճառելով: Այդ սովո-
րական հաճոյքը զգալուց յետոյ նա մի առ ժա-
մանակ մոռացութեան մէջ էր ընկնում, քնում
էր և նրա համետ, միակերպ խամիցը փողը
ինչ վրդովում էին շուրջ տիրող անդորրութիւնը
և միակերպութիւնը:

—Թէյ:
—Խսկոյն,—պատասխանեց ծառան և դուրս
գնաց:

Միխայիլ Նեփոյիլը այդ միջոցին մտեցաւ լուա-
ցարանին, բացեց ամբողջ կօսմէտիական
ժողովածուն և սկսեց դանդաղ կերպով լուսնալ
իր ձեռքերը, երեսը, պարանոցը և մաքրել բե-
րանը, ատամներն ու ականջները: Լուսնվեց,
օձվեց, սանրվեց, կարգի բերեց խալաթը, նայեց
հայելու մէջ, ժպտաց ու բոլորովին զոհ իրանից,
նստեց բազկաթոռի վրա, սեղանի առաջ և կըպ-
ցրեց մի նոր անուշահոտ սիգար:

Ծառան արձաթեպ մտաուցարանի վրա բերեց
թէյը, դրեց սեղանի վրա և յետոյ մատուցանելով
Միխայիլ Նեփոյիլին մի նամակ, հեռացաւ և խո-
րին յարգանքը երեսին կանգնեց դրան մօտ:

ծի գլուխ կանգնելու, որ աշխատեն, չը խնայեն ոչ մի միջոց այս խնդրի մասին: Թող իրար մօտ հաւաքուի մի քանիսն, որոնք մասին, և ծրագրեր պատրաստեն: Իսկ երբ կը խորհեն, ամեն բան կը պատրաստեն, թողութեան հրամանը կը ստանան և կանոնադրութիւնը կը հրատարակեն, թող հաստատ համոզված լինեն, որ հէնց հետեւեալ փոստին, մենք բոլոր ուսուցիչներս կուղարկենք հիմնովի արկղի վարչութեանը ամենամեծ ուրախութեամբ որոշած գումարը:

Եթէ իմ հրաւերն էլ արձագանք չը գտնի,— չը յուսահատուինք. երկրորդ անգամն էլ թող ուրիշ պաշտօնակիցս հրաւեր կարգայ, աւելի զօրաւոր կերպով, ապա երրորդը, չորրորդը... և այլն, մինչև որ հարցը իրագործվի... (Խնդրեցէք և կը արվի ձեզ, բաղնեցէք և կը բացվի ձեզ):

ՆԱԽԱԿ ԿԱՐՍԻՑ

Փետրվարի 26-ին

Բարեկենդանի ուրախութիւնը վերջացած, մեծ պատը ընդհանուր մօայտութիւն է բերել բոլորի վրա: Բաւական խմբերը, բաւական խաղացիներ և այժմ, երբ ընդհանուր հաշիւները գումարելու հերթն եկաւ, զուգահեռ ենք զօրում: Եղան մինչև անգամ մարդիկ, կանաչ սեղանի ասպետներ, որոնք նոյն իսկ կանանց զարդերը տանուլ տուեցին իրանց յափշտակութեան միջոցին: Թեթիւ կերպով մի քանի մէջ նրանք վատնեցին կանանց զարդերը, բայց այդ անդգոյշ քայլով ներս մտցրին իրանց ընտանիքի մէջ մշտական խոսք-վարկեր և երկար տարիներ պէտք է տուէին բոլորական անմիտ դործողութեան համար: Այդ և դրա նման հաղթարար վիտաներ, որ պատճառում է թղթախաղը, հասցնում են մարդուն այն տխուր եղբայրացութեան, որ թղթախաղը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կողմուտ, մի քաղաքաւոր թաւան, այն տարբերութեամբ, որ այդ տեղ միմեանց կողմաւորում են համաձայն ութի և ամբար Մարդը իր ճակատի քրտնքով պէտք է ուտէ իր հացը, որպէս զի կարելի լինէր հաւաք անուանել նրան. բայց երբ մի ժամայ, մի գիշերով մէջ մէկը խլում է միւսից նրա ամբողջ ունեցածը և բաժնի դրանից նրա կնոջ աչքի լոյսի չափ սիրած զարդերը, այն ժամանակ առանց քաշվելու, կարծում կարելի է և յարմար է դրոշմել «գող» անունը այդ «մէկի» լիբը ճակատին: Եւ ցուց է ասել՝ խաղում են ամեն տեղ, նոյն իսկ այն տեղերում, որտեղ օրէնքով արգելված է մեծաքանակ գումարներով խաղալ: Մարդիկ գտնում են օրէնքը անտես առնելու ձևը:

Ամսի 16-ին, եկեղեցում հանդիսաւորապէս կատարվեց վարդանանց տօնը: Պատարապէս ներկայ էին քաղաքի հայոց և արքունի ուսում-

նարանների աշակերտները և աշակերտուհիները: Գեր. Յուսէի վարդապետի ատենաբանութիւնից յետոյ, մի ուսուցիչ ճառ կարդաց: Աշակերտները մի քանի ազգային երգեր երգեցին: Բայց բոլոր հանդիսականները ուշքը զրաւեց «Լեւոն» ամպերը եկան ծածկեցին երկինքը՝ երգը, որ հիմա յայտ կերպով երգեց, մի այլ օրինորդի ձայնակցութեամբ, աշակերտուհի օրինորդ Մէլիքեանց: Երեկոյան տեղիս թատրոնասէրների երկրորդ խումբը, յօգուտ հայոց ուսումնարանի, ներկայացրեց «Սէր և նախապաշարմունք» և «Կրթութիւն» պիեսները: Զուտ արդիւնքը հասնում է 143 ռուբլու:

Թունվարի 22-ից սկսած տաքութիւնը շարունակվում է: Թէև վերջին օրերս համաժամաբար ցուրտ է Ձիւնի հալվելուց զոչացած ջուրը՝ արդէն մեծ տեղ գրաւելով, լճացել է քաղաքիս հարաւարեկեան մասում: Ի նկատի ունենալով, որ այս տարի ձիւնը շատ է, և որ դեռ ևս կանոնաւոր հալչոց չը սկսված արդէն լինել ինչ է ջրով ժողովուրդը տաքնապի մէջ է. նա սարսափով է յիշում 1887 թվ. մարտի 25-ը, երբ անգլիկ վիշապ կրեց հեղեղի պատճառով: Թէև նախազգուշացնում են համար ջրանցքի արեւելի գտնված խաւութիւնը քանդելու են ուստիկանութեան ձեռքով, բայց և այնպէս շատ և շատ հաւանական է, որ այդ կողմնակի միջոցները անգոր կը լինեն հեղեղի առաջն առնելու: Լսում ենք, որ քաղաքի վերանորոգութեան հետ շինվելու է և այդ ջրի կանոնաւոր անցքը, որի համար արդէն որոշված է մի խոշոր գումար: Այդ ջրանցքն ազատելու է խաւութեան արեւելի ու ամենաբարձր խորքանշիւր գարնան սկզբին առ ուղիղ մէջ լինելուց և նոյն իսկ նիւթապէս վնասվելուց:

Ի դէպ ջրանցքի մասին: Կարսի բնակիչները ամենամեծ մասը խմելու համար գործ է ածում Կարս-դետի ջուրը, միայն փոքրամասնութիւնը օգտվում է քաղաքի հիւսիս-արեւմտեան ծայրում վաղուց քաղցրահամ առուակի վճիտ ջրից: Կարս-դետը անցնելով քաղաքի մէջտեղից և իր հետ բերելով զանազան անաղանդութիւններ, նոյն իսկ առաջացնում է վարակիչ հիւանդութիւններ, որոնց պատճառով և նախազգուշական միջոցների են ձեռնարկում ջուրը մաքուր պահելու համար: Եւ որովհետեւ քաղաքն էլ հետզհետեւ տարածվում է դետից հեռու հարաւարեւմուտ՝ ընդարձակ դաշտալայրի վրա, ուստի ջրի պակասութիւնը շատ զգալի է և քաղաքի ընդարձակվելուն խոչնդոտ հանդիսացող հանդամանքներից մէկն է: Բնական նաբար այդ հարցը չէր կարող չը գրաւել տեղական իշխանութեան ուշադրութիւնը, որի հոգան է քաղաքի բարեկարգութիւնը, թէև այդ հոգածութիւնը ծանր կերպով ազդում է ժողովրդի զբոսաւոր վրա: Եւ արդարեւ, տեղիս պահանջապետը արդէն մտածում է մտաւայ մի գիւղի առողջարար ջուրը բերել տալու համար: Փաղաքի միջոցները ընդարձակելու համար պահանջապետը մտա-

ղիր է «էտիսաբ» կոչված տուբը՝ քաղաք եկող կենսական պիտոյքների իւրաքանչիւր ծախսված բեռից ստացվող մասը թողնուելին խնդրել դարձեալ տան տարով վերցնելու, բայց այս անգամ ի նպատակ վերաշինութեան քաղաքի Այդպիսի մի տուբը օրէնքով թողարկված չէ, բայց այս քանի տարի էր իրեն բացառութիւն թողարկված էր վերցնել և արդիւնքը գործ դնել տեղիս օրինորդական քաղաքային երեքդասեան ուսումնարանի պահպանութեան համար: «էտիսաբը» արվում է կապալով և տարեկան բերում է 7—8 հազար ռուբլի արդիւնք: Այստեղ մտածվում էր և քաղաքային հիւանդանոց բանալու մասին և այդ պատճառով և հասարակութեան մի քանի անդամներից ժողով հրաւիրելով, խորհրդակցեց թէ քննելու է աւելի անհրաժեշտ քաղաքի համար՝ ջրանցքը թէ հիւանդանոցը: Ժողովականների մեծամասնութիւնը աչքի առաւ ունենալով, որ նախ քան հիւանդանոցներ խնամելը՝ հարկաւոր է նախազգուշացնող միջոցներ գործ դնել հիւանդութիւնների առաջն առնելու համար՝ ձայն տուեց ջրանցքի օգտին, մնացածները աւելի անհրաժեշտ էին համարում հիւանդանոց բանալու: Հարցը այդպէս դեռ ևս անորոշ դրութեան մէջ է: Ինչ կարծիք որ ջրանցքը ներկայումս աւելի կարեւոր է, քանի որ դրանից օգտվում է քաղաքի ամբողջ ազգաբնակչութիւնը, իսկ հիւանդանոցը՝ մասնաւոր աչքի առաւ ունենալով ժողովրդի անվստահութիւնը դէպի այդ տեսակ հիւանդութիւնները—օգուտ քաղելու է մի աննշան փոքրամասնութիւն:

Տեղական իշխանութեան յորդորանքով գիւղացիներից մեծաքանակութեամբ են մասնակցելու թիֆլիսի այս տարվայ գիւղատնտեսական արդիւնքներից ցուցահանդիսին: Յանկալի է որ մեր գիւղացիները իրանք հասկանալով այդ տեսակ ցուցահանդիսների նշանակութիւնը՝ ինքնաբերաբար մասնակցեցին ցուցահանդիսին, որովհետեւ ինքն ծառայած լինելով մի ժամանակ գիւղերում, դեռ 1882 թվ. Մոսկվայի ցուցահանդիսի միջոցին, անձամբ համոզվեցայ որ ժողովուրդը չը գիտէ զանազանի հրամանը առաջարկութիւնից և այդ պատճառով էլ շատ անյօժարութեամբ է վերաբերվում ուստիկանութեան հրաւերին: Բայց ով պէտք է հասկանցէր ժողովրդին—արդեօք անգրագէտ քահանայ՝ թէ ոչ-գրագետ ուսուցիչը:

Թող թող արվի մեզ մի քանի խօսք էլ ասել վերջին ժամանակներս լոյս տեսած դրերի ընդհանուրութեան մասին: Յաւելով ենք յիշում հանգուցեալ Ս. Պալասանեանի՝ որ «Փորձի» մէջ Գրիգորեանութեանը էր գրում և որի մատենախոսութեան մէջ աղ ու համ կար, ինքնուրոյնութիւն և անաշուտութիւն կար իսկ այժմ ինչ է ներկայացնում մեր մատենախոսութիւնը. իւրաքանչիւր գրուածը գովարանվում կամ պախարակվում է, նայելով թէ

գրողը քի բանակին է պատկանում: Միայն «Մշակի» համառօտ ըննադատութիւնների մէջ էլի կարելի է արդարութիւն տեսնել: Հրատարակվում է մի գրքից, դիցուք Արեւիկանի «Նմուշներ» վերնագրով պատանեկան բանաստեղծութիւնների ժողովածուն. մեր մամուլը՝ որի պարտականութիւնն էր ցոյց տալ հեղինակին, որ այդպիսի անձուներ, անհամ, հրէշաւոր լեզուով զբաղած ԳԱՆՈՒԹԵԱՆ բանաստեղծութիւն չէ, որ բաւերը անմիտ կերպով կուտակելը չէ նշանակում Պարսափ վրա բարձրանալ: Եւ ահա մի լրագրում սկսում է դուրս գալ մի պարոնի երկար ու բարակ յօդուածը, որի գրողը ցոյց է տալիս այդ գրքի արժանաւորութիւնը, հիւանդանոցի փառաւոր ապագայ: Միայն «Մուրճի» 2-րդ համարում ըստ արժանոյն գնահատված էր յիշեալ գրքից: Ինչ է նշանակում մի մարդու խաթիր շահելու համար մոլորեցնել ամբողջ ընթերցող հասարակութիւնը և նոյն իսկ հեղինակին սխալ դատաւար տալ իր ընդունակութեան մասին: Միթէ մեզ համար ակներև չէ չափազանց գովեստի վատ հետեանքը, երբ ապագայ խոստացող երիտասարդ մի գրողին այնքան գովարանեցին հայ և օտար թերթերում, որ նա իր չափեր կորցրեց, կաշուց դուրս եկաւ: Ախտոս է, պարոններ, թէ հայ ընթերցողը և թէ գրողը—բարեկենդանի շարժիւն անձնասպանութիւն գործեց մի օտ Պատճառը յայտնի չէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

ԱՐԻԱՆՆԻ հայոց զարդի հոգաբարձութիւնը յայտնում է «Մշակի» միջոցով իր շնորհակալութիւնը կարսաբնակ Սարիբէգ Միկիբեռտեանին, որը Կարսի գանձարանի հաշապահ պ. Վարդապետանի ձեռքով ուղարկել է յօդուտ Արդահանի զարդի 50 ռուբլի, նոյնպէս թիֆլիսաբնակ Ալեքսանդր Միլեանցին, որը ուղարկել է հոգաբարձութեանը թանգարանի դարձեր, Արդահանի Ս. Լուսաւորիչ եկեղեցուն, իբրեւ նուէր:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Փետրվարի 14-ին Եւսուց պէտք է տանէին Ղանձակ եօթ հողի թուրք աւագանիներ, որոնք դատաւարութեամբ էին Սիբիր աղբորկելու: Թառաւա կայարանի մօտ Փուրգոնում նոտած այդ աւագանիներից մէկը փախչում է. զինուորները սրա ետևից գնալու ժամանակ, միւսներն էլ են փախչում: Զինուորները սկսում են հրացան արձակել և փախչողներին 6 հողուն սպանում: Փուրգոնից էլ, երկուրդից սկսում է նմանապէս փախչել, զինուորները հետևեց կարծելով, որ նա էլ կարանաւորվածներին է, նրա վրա էլ հրացան են արձա-

վեր կառնի:

—Խաբիր, ասա կանանմ, պատասխանեց Միխայիլ Եզօրիչը սառնօրէն, մի և նոյն ժամանակ մտածելով:

—Ի՜նչ կը լինի, եթէ ես առնեմ ձին ու ընծայեմ Նատալիա Պաւլովնային:—Այո, անխձածը որքան գեղեցիկ է: Միխայիլ Եզօրիչի երևակայութեան մէջ իսկոյն պատկերացաւ այն տրամադրութիւնը, որի մէջ կարող էր դնել նա Նատալիա Պաւլովնային, ձին ընծայելով նրան: Այդ պատկերի ազդեցութեան տակ նրա նախաբերը սրտի թելերը շարժվեցան, և նա վճռեց իրականացնել այն, ինչ երևակայութիւնը մի րօպէսում նկարեց նրա առաջ:

—Միշտ, գնանք կուր, այնտեղ կը լինի և իմ Նատալան: Այնտեղից էլ կը գնանք նրա հետ մի տեղ ընթերցու: Քո կառքը, անխձած, իմ Նատալային խնդիր կը հանի. —նա շատ է սիրում սեպական կառքով, սեպական ձիաներով շրջել:—Նախանձում եմ, եղբայր, քեզ, ասեց Սերգէյ Նիկիտիչը խոր հոգոց հանելով:

Սերգէյ Նիկիտիչի առաջարկութիւնը ուղիղ Միխայիլ Եզօրիչի տրամադրութեանն էր համապատասխանում:

—Յաղոգութիւնը անկասկած է, մտածեց Միխայիլ Եզօրիչը անհուն ուրախութիւն զգալով: Նա յայտնեց իր համաձայնութիւնը, պատուիրեց կառքը լծել և սկսեց հագնվել:

Ժամի ութին Միխայիլ Եզօրիչը և Սերգէյ Նիկիտիչը կառք նստան....

Թարգ

Եզօրիչը դեռ մի որոշ տպաւորութիւն չէր ստացել այդ նամակից, ուրեմն դեռ ոչինչ եղբայրացութիւն էլ չէր արել, երբ դրան զանգը քաշեցին և ծառան դուրս գնաց:

—Ո՛վ պէտք է լինի, անցաւ Միխայիլ Եզօրիչի մաքով. նա բաւականութեամբ նայեց իր խալաթի և նրբագործ հողաթափերի վրա, և մի տեսակ լուրջ ու գործունեայ դէմք առնելով, յետ ընկաւ բաղկաթուի մէջքի վրա, սպասելով հիւրին:

—Սերգէյ Նիկիտիչ, յայտնեց ծառան:

—Ներս հրաւիրիր:

Հնալով ներս վազեց մի երիտասարդ վերջին մոզայով հագնված, երեսը սափրած խոնձոճ մաղերով:

—Օ՛, Սերգէյ Նիկիտիչ, բացագանչեց Միխայիլ Եզօրիչը, հասակն առած մարդու եղանակով (ամեն բանի մէջ նա հասակաւորներին էր ուղւում նմանվել):

—Օ՛, Միխայիլ Եզօրիչ, բացագանչեց նոյնպէս Սերգէյ Նիկիտիչը:

—Ա՛յ, նորահաւորում եմ խալաթի, բացագանչեց նա նորից, մօտենալով Միխայիլ Եզօրիչին:

Սերգէյ Նիկիտիչի իր խալաթի վրա ուշադրութիւն դարձնելը և նրա բացագանչութիւնները մոռացնել տուին Միխայիլ Եզօրիչին ստացած նամակը, և նա մոռանալով րօպէական անախորժ տպաւորութիւնը, նորից ուրախ տրամադրութեան տակ ընկաւ և ինքնագոհ կերպով պատասխանեց Սերգէյ Նիկիտիչի բացագանչութեանը:

—Այս արդէն մի տարի է, որ առեւ եմ: Մի և նոյն ժամանակ յիշեց, որ դեռ առաջին անգամն

Ահա այդ էր զրկած նամակի մէջ: Միխայիլ Ե-

և պոլիցիալի հոկոտութեանը կը յանձնեն:

ԲԵՐԼԻՆ, 6 մարտի: Երէկ առաւօտ աշտուղ ժամանեց Մեծ Իշխանութի Մարիա Պալլադիա և այցելեց զերմանական կայսրին և կայսրուհուն:

Կէսօրին ճանապարհ ընկաւ դէպի Գարիգ:

ՓԱՐԻՉ, 6 մարտի: Բուլանժէ, երբ Տուր ժամանեց, համակրական բացականչութիւններով ողջունեցին նրան, ժողովրդի միջից սակայն լսվում էին շտեմեր և զանազան աղաղակներ: Տուրում երէկ կայացած բանկէտում Բուլանժէ ճառ խօսեց, որի մէջ ասեց ինքն ազգային կուսակցութեան պրօգրամային նպատակն է՝ հաստատ հիմքեր վրա դնել հանրապետութիւնը, վերականգնել իշխանութիւնը և ապահովել ազատութիւնը: Բուլանժէ հերքում էր իր վրա բարդված այն մեղադրանքը, որ ինքն իբր թէ դիկտատորական ձգտումներ ունի և յայտնեց, որ իր կուսակցութիւնը ցանկանում է հանրապետութիւն, բայց զօրեղ կառավարութիւն ունեցող, ժողովրդի բարօրութեան մասին հոգացող և խղճի աղատութիւնը յարգող մի հանրապետութիւն:

ԲԵՐԼԻՆ, 6 մարտի: Այն լուրը, որ իբր թէ Միլան խնամակալների հետ գրաւոր պայման է կապել՝ չը թող տալ Նատալիա Թագուհուն Սերբիա վերադառնալ, ճիշդ է: Թագուհու Սերբիա գալը չէ արգելված: Բայց Միլան, հիմնվելով սահմանադրութեան վրա, որով իրաւ բացասական իրաւունք է տրվում զեղաբարեղ որդու կըրթութիւնը, չէ թույլատրում, որ Թագուհին ընտելի պալատում որդու մօտ խնամակալները, ցանկանալով Միլանի այդ վճիռը թեթևացնել, համոզեցին նրան ժամանակ առժամանակ ուղարկել որդուն մօր հետ տեսակցելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴԻ ԲՈՐՍԱ

Մարտի 3-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէն	93	7
Բորսայի վրա 100 մարկ	45	87
Փարիզի վրա 100 ֆրանկ	37	—
Ոսկի — արծէն	7	43
Մարտային կուպոններ	148	75
Արծաթ —	1	10
Բորսային դիվիդենդներ	5 1/2	6 1/2
Պետական 5% տոմս 1-ին շրջանի	99	—
— 2-րդ	98	87

— — — 3-րդ	98	87
— — — 4-րդ	98	87
— — — 5-րդ	98	87
Ոսկեայ փոխառութիւն	133	50
Նոր 40% փոխառութիւն	—	—
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	99	75
— 2-րդ	99	75
— 3-րդ	99	75
Եւրոյին 50% առաջին փոխառութիւն	275	50
— երկրորդ	248	—
50% բէնտա	144	75
Ոսկեայ բէնտա	170	25
5 1/2% —	102	50
Նոր երկարաժամկետ բէնտա	99	62
50% գրաւական թղթեր կալուած.	—	—
— փախ կրեդ. ընկ. մետ.	142	37
— թղթադր.	92	37
40% ներքին փոխառութիւն	84	—
Գրաւ. թղ. Ալիւ. բանկի	98	25
Գրաւական բանկի	102	—
5 1/2% գրաւական թղթեր Խորսուի կալուած. բանկի	99	37
50% գրաւ. թղ. Խորսուի կալ. բան.	101	50
— Թիֆլիսի — 27 և 43 տ.	97	75
— Գոթլայի — 18 և 43 տ.	98	25
Վ. Օլոկո-Կամպի բանկի անցիւնները	720	—
Խորսուի երկարաժամկետ դիվիդ. ընկ.	237	—
Եւրոյին 5% փոխառութիւն	93	25
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	95	25
— Գոթլայի քաղաք. օբլիգացիաներ	94	75
Եւրոյին —	94	75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	83	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:	—	—

ԽՍՖԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԱՍՏՐԱԽԱՆ. Յ. Ս. «Մշակի» № 16-ի երկու օրինակը ուղարկեցինք ձեզ, բայց օրացույց ձեզ ուղարկելը ուրիշին յանձնեցինք: Մենք միշտ ասել ենք և նորից կրկնում ենք, որ մենք չենք յանձն առնում ոչինչ գրքեր կամ բրօշուրներ Թիֆլիսից դուրս ուղարկելու, բացի այն բրօշուրներից, որոնց մասին ինքներս ենք յայտնում, թէ ծախվում են «Մշակի» խմբագրատանը:

ԱՐԳԻՆԱ. Յ. Յ. Գուր մեր թղթակից լինելով, ամենեւին չէինք ուզում ձեզանից «Մշակի» բաժանորդավճարը պահանջել:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդանոցին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԳԻՆ—9—11 ժ. Կիրաւութեան, նաև առամանուցաւի, սիֆիլիսի և աչքի ց. ԲՈՒԳՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ԿԻՆ-ԲԻՐԵՇ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց. ԲԵՆԿԻՆՍԿԻ—11—12 ժ. անկանչի, կոկորդի, բրձի ց. և սիֆիլիսի: ԱՐՏԵՄԻՆԻ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՂՕՄԿԻ—4 1/2—5 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ՆԱԽԱՍԱՐԳԻՆ—5 1/2—6 1/2 ժ. ՓՈՒՎԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա): Հիւանդանոցում է մանկաբարձուհի ՄՕՂԵՐ: Վճար—50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերտեսուչ ՆԱԽԱՍԱՐԳԻՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԵՐՄԱՆԵՐԻՆ-ՀԱՅԵՐԻՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱԳԻՐԻ

Աշխատասիրեց հ. Աւետիք վ. Կոյաւեան, Վիեննա, 1889, Միլիթարիան տպարան
Նոյն գերմաներէն-հայերէն (աշխարհաբար) բառադիրքն (104 թերթ—1667 երես) ունի սկիզբն համառօտ գերմաներէն քերականութիւն. կը բովանդակէ գերմաներէն լեզուի ամեն գործածական գիտնական և ընտանեկան բառերն ու բացատրութիւններն, բառերու ասութիւններն ու առումներն, և այլն: Տպւած է աղին թղթի վրա, թղթակազմ կամ կիսաթիւ արժէքն է 10 ռուբլի, կիսաթիւի 11 ռուբլի, ճանապարհի ծախքը 80 կոպէկ գնողին վրա է: Շատ օրինակ գնողին քանակութեան համեմատ գինը կը լինի: Ցանկացողները կարող են ստանալ զինն ու ճանապարհի ծախար ուղարկելով հետեւեալ հասցէին. Вѣ Вѣну. (Австрія) Mechitharisten-Congregation Wien Mechitharistengasse 4. 1—5

ԱՐԱՔՍ ՊԵՏԱԿԵՐԱԶԱՐԳ ԶԱՆԴԻՍԻ ԽՍՖԱԳՐՈՒԹԻՒՆՑ

Բացառիկ հանգամանքների պատճառով «ԱՐԱՔՍ» առաջին գրքի հրատարակութիւնը կուշանայ մի ամսով: Առաջին գրքի արդէն յայտարարված բովանդակութեան մէջ փոփոխութիւն կը լինի: Երկրորդ գրքը կը հրատարակվի մայիսի վերջին:

Բաժանորդագրութիւնը շարունակվում է: Գինը այս հասցէով. Петербургъ, Симеону Гуламирянцу. 1—1

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբեր ընդհանրութեան, որ քաղաքային խորհրդարանը 29 սեպտեմբերի 1887 թւին, և 17 փետրվարի 1889 թւին կայացրած վճիռներով կարգադրել է.

1) Խորհրդարանի առաջիկայ 1889—1893 քառամեակի ձայնաւորներ ընտրելու մասին կազմել քաղաքային ընտրողական ժողովներ առաջին կարգի համար—21-ին, երկրորդ կարգի—23-ին և երրորդ կարգի—28-ին մայիսի 1889 ամի:

2) Չը պահանջել կարուածատէրերից նրանց կարուածների վրա 1864 թւից սկսած մինչև 1879 ամի մնացած քաղաքային հասանելի ապառիկները:

3) Չը պահանջել կարուածատէրերից այն տուգանքը, որ նրանք պէտք է վճարէին քաղաքի օգտին կարուածներից հասանելի 10% տուրքը իր ժամանակին չը վճարելու համար մինչև 29-ն սեպտեմբերի 1887 ամի բացի այս չը պահանջել այս տեսակ տուգանքը 29-ից սեպտեմբերի 1887 ամի մինչև խորհրդարանի նոր կազմակերպելը:

4) Ընտրողական ցուցակներն աւարտել մինչև 25 փետրվարի 1889 ամի:

5) Վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակները յայտնել ի տեղեկութիւն ընդհանրութեան 20 մարտի 1889 ամի, բաժանելով քաղաքացիներին, նմանապէս կրպշնելով քաղաքի յայտնի տեղերում և խորհրդարանի դահլիճում 200 օրինակ տպված յայտարարութիւններ:

6) Քաղաքի բնակիչներին զանգառները ընտրողական ցուցակների մէջ պատահած սխալների մասին ընդունել քաղաքային վարչութիւնում մարտի քսանից մինչև երեքուն ապրիլի և այնուհետև համաձայն 27 յօդ. քաղաքային կանոնադրութեան, ուղղված ընտրողական ցուցակները ներկայացնել խորհրդարանի հաստատութեանը անպատճառ մինչև 20 ապրիլի 1889 ամի:

Ընդ սմին քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում զգուշացնել քաղաքի բնակիչներին թէ թէպէտ սոյն յայտարարութեան 4-րդ հատուածում յիշած ընտրողական ցուցակների աւարտման ժամանակամիջոցը խորհրդարանը նշանակել է 25 փետրվարի 1889 ամի և այդ ընտրողական ցուցակների մէջ, համաձայն 4-րդ ծանօթութեան 17 յօդուածի քաղաքային կանոնադրութեան, անկարելի է մոցնել քաղաքի այն բնակիչներին, որոնց վրա մինչև յիշեալ ժամանակը մնացած կը լինեն ապառիկներ քաղաքին հասանելի տուրքերից, բայց համաձայն հրամանի Պետական Սենատի 5 փետրվարի 1885 ամի № 1312, որով բացատրված է քաղաքային կանոնադրութեան 17-րդ յօդուածի խկական միտքը, յիշեալ բնակիչները պէտք է մոցնվեն ընտրողական ցուցակների մէջ 25 փետրվարի 1889 ամի ժամանակից յետոյ էլ, միայն այն պայմանով, որ նրանք վճարեն իրանց վրա մնացած ապառիկները մինչև այն ժամանակ, երբ քաղաքային խորհրդարանը վերջնականապէս կը հաստատէ ընտրողական ցուցակները: 2—3 (ե.)

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր հայ գրավաճառների մօտ Թիֆլիսում

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԳԱԽԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

(Գաւառական պատկերներ): Գրեց Ալէքսանդր Արարատեանց: Գինն է 70 կոպէկ:

Կիրքը հրատարակված է հանգուցեալ հեղինակի պատկերով: 7—10

ԾԱՌՎՈՒՄ Է ԱՅԳԻ

ԹԻՖԼԻՍԻ Կօլոնիայում, վերայի կամուրջի մօտ, 1,000 քառակուսի սաժէնի մեծութեամբ: Այգու երկարութիւնը 69,66 սաժէն է, իսկ լայնութիւնը 14,37 սաժէն: Այգու սահմաններն են՝ մի կողմից Վօրոնցովսկայա Նաբէրէժնայա, միւս կողմից Նաբէրէժնայա փողոցը, երրորդ կողմից գետնալ Զերնիի տունը, չորրորդ կողմից Յովհաննիսյանի այգին:

Տիրոջ հասցէի մասին հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

3—3 (ե.)

ՂԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Ֆրանսիայի դեղին և սպիտակ շերամի ամենալաւ ցեղից պատրաստած ունեմ, Պատուիր մեթոդով: Ֆունտը 60 ռուբլի, 5 մետրը 3 ռուբլի 50 կոպ., ճանապարհածրտով:

Հասցէն՝ Туансе, Черноморскій округъ, Варваринская Сельско-Хозяйственная школа, Леону Степанянцу. 7—15

CAFÉ MAENDEL WIEN

ROTHENTHURMSTRASSE (STADT). ZEITUNGEN IN ALLEN SPRACHEN

ԿԱՅԷ ՄԷՆԴԷԼ

Վիեննայում ապրող բոլոր հայերի տեսակցութեան տեղն է: Այդտեղ ստացվում են և հայոց լրագիրներ, ի միջի այլոց և «Մշակի» լրագիրը: 3—3 (ե.)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՐԻՍՏՈՐ ՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ԹՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԴԻՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 ռուբլի, ճանապարհի ծախքը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին զինումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ Խիդիկէի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօրովնիսկի Պրօսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ: 40—40